

ԿԱՐԾԻՔ

սպաշտոնական ընդդիմախոսի

Տաթևիկ Միմոնի Բաղդասարյանի «Շրջակա միջավայրի վրա պոչամբարների ազդեցության բնույթի, մասշտաբների, հետևանքների գնահատումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ մերկայացված ԻԴ 04.01 «Երկրաբանություն» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանքարդյունաբերության և հանքանյութերի վերամշակման ոլորտի գործունեությունը բնապահպանական լուրջ բարդություններ է առաջացնում՝ զգալի ազդեցություն ունենալով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Հատկապես պոչամբարները, բացի հողային ռեսուրսների խախտումից և տարածքների զբաղեցումից, բացասաբար են անդրադառնում մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի վրա՝ առաջացնելով դրանց աղտոտման և էկոհամակարգերի խախտման վտանգ: Նշված խնդիրները դժվարություններ են առաջացնում հանքարդյունաբերություն ունեցող երկրների վրա, մանավանդ այնպիսի փոքր երկրի վրա, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը: Գործող պոչամբարները հիմնականում գտնվում են թերի վիճակում: Այդ տեսակետից ատենախոսի կատարած աշխատանքը արդիական է և պրակտիկ, կարևոր նշանակություն ունի:

Ատենախոսության խնդրի դրվածքը

Տ.Ս. Բաղդասարյանը հանքարդյունաբերության և հանքահարստացման հիմնարկների մաքրման աշխատանքների տեխնոլոգիայի մշակման հասնելու համար լուծել է հետևյալ խնդիրները՝

1. Վերլուծել պոչամբարների տեղակայման տարածքների բնական պայմանները ու բնապահպանական առանձնահատկությունները:

2. Ուսումնասիրել Գեղանուշի, Արծվանիկի և Ագարակի պոչամբարների հարակից տարածքի հողերի և ջրերի քանակական և որակական ցուցանիշները:

3. Բացահայտել և գնահատել վնասակար նյութերի տարածման օրինաչափությունները:

4. Մշակել պոչամբարների ազդեցության և աղտոտման տարածման գոտիների սահմանազատման գիտական սկզբունքները:

5. Մշակել աղտոտիչների տարածման նվազեցման արդյունավետ մեթոդներ:

Աշխատանքի բովանդակությունը

Աշխատանքը կազմված է 124 էջից: Ատենախոսության մեջ ներառված է ներածություն, 5 գլուխ ,գրականության ցանկ: Այն պարունակում է 31 նկար և 21 աղյուսակ: Ներածությունում ներկայացված է հետազոտության նպատակը, խնդիրները և կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում նկարագրված է պոչամբարների առաջացումը, կազմը և բնութագրեր, ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա : Նաև պոչամբարների կառավարման և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման ժամանակակից մոտեցումները: Կատարել է գրականությունից վերլուծող եզրակացություններ:

Երկրորդ գլխում նկարագրված է հետազոտության օբյեկտների ընտրության հիմնավորումը և բնութագիրը, հետազոտվող տարածքների աշխարհագրական և բնակլիմայական պայմանները:

Կատարված են նմուշառման կազմակերպումը (հողային, ջրային բուսական): Այնուհետև նկարագրված են լաբորատոր հետազոտությունների մշակման մեթոդները:

Ընտրված հետազոտման օբյեկտները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության տարբեր բնակլիմայան և աշխարհագրական

պայմաններում շահագործվող պոչամբարները, ինչը հնարավորություն է տալիս համակողմանիորեն գնահատել դրանց ազդեցության բնույթը, մասշտաբները և շրջակա միջավայրում աղտոտիչների տարածման օրինաչափությունները: Նշենք, որ նմուշները վերցվել են պոչամբարներից տարբեր հեռավորությունների վրա՝ 20մ, 50մ, 200մ, 400մ: Նմուշառված կետերը ընտրվել են տարբեր ուղղություններով (հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք), ինչը հնարավորություն է տվել գնահատել ծանր մետաղների տարածման և բաշխման առանձնահատկությունները և դրանց պարունակության փոփոխությունը պոչամբարից տարբեր հեռավորությունների և ուղղությունների վրա:

Տվյալ աշխատանքում մետաղների որոշումը կատարվել է ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրիայի միջոցով (պղինձ, ցինկ, կապար, նիկելի, կոբալտի, կադմիում, մկնդեղի երկաթի ISO 1558 ստանդարտի պահանջների համապատասխան) Գեղանուշի և Ագարակի պոչամբարների տարածքի հետազոտություններ:

Երրորդ գլխում նկարագրված են փորձարարական արդյունքները և վերլուծությունը: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարների հարակից տարածքների հետազոտություն:

Չորրորդ գլխում նկարագրված է քամիների ազդեցությունը պոչամբարների տարածքներից ծանր մետաղների միգրացիայի վրա: Առաջարկված է փոշոտ մակերևույթների ամրացման եղանակ և գոլորշիներում ծանր մետաղների նվազեցման եղանակ:

Հինգերորդ գլխում կատարված է տնտեսական վերլուծություն: Բերված են հաշվարկի նպատակը և խնդիրները, արված է եզրակացություն:

Հեղինակի կողմից տրված բոլոր եզրահանգումներն աստենախոսությունում շարադրված հիմնական դրույթները հավաստի են և հիմնավորված են ճշգրիտ մեթոդներով իրականացված փորձերի արդյունքներով: Հեղինակի բոլոր եզրակացություններն ունեն կարևոր գործնական նշանակություն:

Հետազոտությունները կատարվել են Ժամանակակից մեթոդներով: Աստենախոսությունը ունի կիրառական նշանակություն

